ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1 (17), 2008

ՀՏԴ 891.981.0 *Գրականություն*

ԱՆՄԱՀ ՎԻՊԱԳԻՐՆ ՈՒ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԸ
/Ալ. Շիրվանզադեի ծննդյան 150-ամյակի առթիվ/

Ս.Ա. Խանյան

Հոդվածում դիտարկվում և գնահատվում են մեծանուն գրողի վեպերն ու դրամատիկական երկերը ընդգծվում նրանց տեղն ու դերը հայ գրականության և թատերական արվեստի զարգացման ու հարստացման ասպարեզներում:

1910 թվականին, Շիրվանզադեի (ծնվել է 1858թ-ի ապրիլի 7-ին, Շամախի գյուղաքաղաքում), գրական գործունեության 30-ամյա հոբելյանի օրերին, Մեծն Լոռեցին բարձրաձայնեց. «Վերջապես կցանկանայինք, որ մեր ազգն էլ կարողանար տեսնել, գնահատել ու պաշտպանել իր ծնած ուժերը: Եվ երբ որ տեսնի-կհամոզվի, որ նրանց մեջ էլ կան այնպիսիները, որոնք իրենց տաղանդով մրցում են ու հավասար են եվրոպական ժողովուրդների սիրված, հանրահռչակ հեղինակներին, տարբերությունը միայն սրանց ու նրանց բախտի մեջ է» /Հ. Թումանյան, Երկեր չորս հատորով, 1969,հ.4,էջ 119/:

Հայոց հանճարը ծլարձակել, ծաղկել ու պտղավորվել է անընդմեջ կրկնվող տխուր իրադարձությունների ու փոթրանքների շարաններում: Նման իրավիճակում ընթացավ նաև Ալ. Շիրվանզադեի կյանքն ու գործունեությունը:

19-րդ դարի երկրորդ կեսի տնտեսապես քայքայվող, ինչպես նաև ահավոր երկրաշարժ տեսած գավառական Շամախի քաղաքում 6 տարեկան Ալեքսանդրը սկսում է սովորել բառդրական քարոզիչ Սարգիս վարդապետի ուսումնարանում, ապա թեմական դպրոցում: Պարզ է, որ շատ քիչ բան կարող էր ստանալ ապագա գրողը այդ հետամնաց կրթական օջախներում: Պատանի Ալեքսանդրը երազում էր ուսումը շարունակել տեղի ռեալական դպրոցում, որը սակայն չի իրականանում, ընտանիքի և շրջապատի դառն կյանքի ծանրությունը մտահոգում է ապագա գրողին: 1875թ-ին նա քանում է Բաքվի ճանապարհը, մեկընդմիշտ հեռանալով հայրենի նզոերից: Ապագա գրողը մտնում է մի աշխարհ, ուր իշխում էին կյանքի հակադիր հարաբերությունները շահի կատաղի մրցավազքում: Եվ 19-րդ դարի արդյունաբերական Բաքվի հակասական եռուզեռը դառնում է երիտասարդ գրողի դաստիարակիչ դպրոց: Բաքվի նահանգական վարչության գրասենյակում գրագրի պաշտոնը մի կողմից ճանաչություն է պատճառում նրան, մյուս կողմից հնարավորություն է ընձեռում ճանաչել կյանքը և բացահայտել ստեղծագործական իր կարողությունը: Այդ անհրաժեշտ քայլերի համար ոչ միայն Ալեքսանդրը, այլև մեր գրականության նվիրյալները իրենց գոհունակությունն ու երախտիքն են հայտնել գրողի մորաքրոջ՝ Մարիամ Աբելյանի ընթերցասեր ընտանիքին, որի աստղերից էին դերասան Հովհաննես Աբելյանը, դրամատուրգ Ալեքսանդր Աբելյանը: Շիրվանզադեի ինքնակրթությունն ու մտավոր զարգացումը տեղի է ունենում աստվածաշնորհ այս բարեկամների շրջապատում: Այստեղ է, որ ապագա գրողը ծանոթանում է հայ և համաշխարհային գրականության լավագույն նմուշներին, չնայած հաց վաստակելու համար իր մտավոր կարողությունները վատնում էր նահանգական վարչության գրասենյակում հաշվապահի օգնականի, ապա՝ հաշվապահի պաշտոններում:

Ինքնակրթության և քրտնաթոր աշխատանքի շնորհիվ Ալ. Շիրվանզադեն յուրացրեց Խ.Աբովյանի, Մ.Նալբանդյանի, Ռաֆֆու, Դ.Պռոշյանի, Շնքսպիրի, Մոլիերի, Բայրոնի, Դիկկենսի, Մոպասանի, Գոգոլի, Դոստոևսկու ավանդույթները և դարձավ հայոց վիպագրության հսկան: Նա կերտեց 300 գեղարվեստական կերպարներ, նրանց միջոցով դատապարտեց հասարակական արատները ու հակամարդկային արարքները, հաստատելով այն գեղեցիկն ու դրականը, ինչ փայփայել ու պահպանել է ժողովուրդը դարերի ընթացքում:

Ալ. Շիրվանզադեն հավատար ուժով նկարագրել է թե արդյունաբերական, և թե գավառական քաղաքի մարդկանց կյանքը՝ սոցիալական հակասությունների և հոգեբանական բացահայտումների հյուսվածքով: Ակնառավոր գրողին անչափ հուզում էր հարյուրավոր այն այլուզացիների ճակատագիրը, ովքեր նյութական ծանր ճիրաններից փրկվելու, ընտանիքի համար հանապազօրյա հաց գտնելու հույսով թողնում էին հայրենի գյուղերը և գաղթում ֆիզիկական ու բարոյական ախտերի կենտրոններ դարձած քաղաքներ: Շիրվանզադեն հախուռն տաղանդով իբրև գրական ասպարեզ:

Մանկության և պատանեկության տարիներին ստացած տպավորությունները շատ արագ գեղարվեստական պատկերներ դարձան «Նամուս», «Զար ոգի», «Վարդան Ամրումյան», «Հարթան ու Ասադը», «Տասնհինգ տարի անց» երկերում, որոնք ոչ միայն գրավեցին ընթերցողների ուշադրությունը, այլև նպաստեցին հայ գեղարվեստական արձակի զարգացմանը: Իր «Նամուս» առաջին վեպով երիտասարդ գրողը եկավ ասելու, որ հայ վիպագրությունը նոր ծիրի վրա է: Պատկերի տարբեր տեսակների օգտագործմամբ նա, ինչպես անխարդախ հայելում, ներկայացրեց գավառական կյանքի հակասություններն ու մարդկանց տառապանքները: Բարխուդարի, Հայրապետի, Սուսանի, Սեյրանի, Ռոստոմի կերպարները հաստատեցին, որ գրական ասպարեզ է իջել կերպավորման արվեստին քաջածանոթ մի գեղագետ: «Նամուսին» հաջորդեց «Ցավագար» վիպակը, որտեղ միայն Սոնայի և գիժ Դանիելի կերպարները բավական են, որ այդ երկը հուլվվի բոլոր ժամանակներում: Երիտասարդ արձակագրի ուշադրությունից չվրիպեցին գավառական կյանքի նոր կողմերը, առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների բայայումը:

Ապրելով արդյունաբերական խոշոր քաղաքներում, Ալ. Շիրվանզադեն ականատես եղավ հասարակական կյանքի անընդհատ շերտավորումներին և սոցիալական հակասությունների սրմանը: Նա կյանքի տարբեր կողմերը գրականություն բերեց ռեալիստական թանձր գույներով: Շիրվանզադեն գովում էր դեմոկրատական լայն խավերի բարոյականությունն ու հոգևոր ազնվությունը, խիստ քննադատում վերնախավերի բարոյականությունը, շահագործման հսկամարդկային միջոցները: Հայոց վիպագրության և դրամատուրգիայի անգուգական երկերի հեղինակ վայելեցին մնծանուն գրողի երկերը, որոնցում սոցիալական հակասությունների և անհատի ազնվության պատկերները միանգամայն նոր երևույթներ էին մեր արձակում և դրամատուրգիայում: 1880-90-ական թվականներին մեկը-մյուսին հաջորդեցին «Մնամատաղը», «Սրամիտը», «Զուր հույսեր», «Արսեն Դիմաքսյան», «Կրակը» ստեղծագործությունները: Հայոց ընտանիքի, կենցաղի, բարոյականության հարցերը նորովի լուսաբանվեցին այդ գործերում:

Առաջին անգամ արևելահայ հատվածում ապահարզանի հարցը գեղարվեստական նեարանքներով բարձրացրեց Շիրվանզադեն, պատկերելով ազնիվ անհատների և նրանց շրջապատող հասարակական միջավայրի հակասությունը:

Ալ. Շիրվանզադեի ստեղծած կերպարները երկու խումբ են կազմում: Մի կողմից գործում են ժողովրդանվեր մարդիկ, մյուս կողմից հանդես են գալիս նրանք, ովքեր շահարկում են Ժողովրդի շահերը, կողոպտում և իրականում նրան թողնում մենակ և անօգնական: Իսկական ժողովրդականը, ըստ Շիրվանզադեի, նա է, ով իր ուժերը նվիրում է ազգի փրկությանն ու ազատագրմանը: Այդ հարցն է շոշափել նա «Զուր հույսեր» վեպում, որտեղ ընտանեկան, մենաղային հարցերից բացի, կոնֆլիկտի մեջ է ներառել սոցիալ-քաղաքական խնդիրներ: Ժամանակակից բուրժուական գաղափարախոսության քննադատությունն ենք տեսնում նաև «Արսեն Դիմաքսյան» վեպում: Պակաս հետաքրքիր չէ «Ընկերները» պատմվածքը, որտեղ հանդես են բերված թիատաբան Նազիմյանի և ինժեներ Մարկոսյանի խարդավանքները հանուն շահի: Անբարոյականության, կեղտոտ արարքների ներկայացուցիչներ են Բարաթյանն ու Վանիլյանը «Արսեն Դիմաքսյան» վեպում: Նրանք պատվի և փողի գողեր են, որոնք գործում են ինավորության դրական գծերով աչքի ընկնող Արսեն Դիմաքսյանի դեմ: Շիրվանզադեի միտումն այստեղ ավելի ընդգրկուն է: Նա Հաբիգյանի կերպարի միջոցով նշում է մի լուսավոր գաղափար: Արսեն Դիմաքսյանը, դրական ծրագրերով հանդերձ չի ճանաչում իր ժողովրդին: Հաբիգյանը հասկացող է, որ մտավորականության գործը պետք է ուղղված լինի ժողովրդական լայն

զանգվածների բարօրությանը, լուսավորության տարածմանը, աշխատավորության տնտնապես վիճակի բարելավմանը:

1896-97 թվականներին Շիրվանզադեն ավարտեց արձակի իր հզոր գլուխգործոցը՝ «Քառս» վեպը: Դա նախորդ 15 տարիների մտահղացման, մտորումների, ներքին ինքնատիպ ինտուիցիայի արդյունք էր: 19-րդ դարի վերջում արդյունաբերական Բաքվում տեղի ունեցող փոփոխությունները, սոցիալական հակասությունների սրումը, ընտանեկան հարաբերություններում դրսևորվող խարդավանքները, դասակարգային շերտավորումների ուժեղ ընթացքը, կապիտալի կուտակման գայլային օրենքները իսկական քաոս էին: Հին և նորագույն կապիտալիզմի հակադրությունը մարդկանց մղում էր անհաշտ պայքարի: 1880-ական թվականներին տեղի ունեցած ընտանեկան խռովության մի պատմություն մեծ գրողի տաղանդի վառ երևակայության շնորհիվ դառնում է կոմպոզիցիոն-սյուժետային մի կուռ կառուցվածք, որ ընթացքի գեղարվեստական պատկերման շնորհիվ այն դառնում է հասարակական մի ամբողջ կենցաղության անանխադեպ նկարագրություն: Բազմաթիվ տիպերի և սոցիալական բնավորությունների ստեղծումով Շիրվանզադեն մերկացնում է Ալիմյանների ընտանիքի կրքերն ու դիպլոմավոր ներկայացուցիչներին՝ Սմբատ, Միքայել, Արշակ Ալիմյաններին, նրանց փեսա Իսահակ Մարութխանյանին, Սուլյանին, պապաշային: Վեպում ստորաքարշ ու անկշռելի կերպարներին հակադրված է դրական գծերով օժտված գործող անձերի մի խումբ, որոնք ձգտում են վերացնել քաոսը, խուսափել դրամի կործանարար ուժից, խորտակումից փրկել «ազգի երիտասարդության» կեղտաջրի մեջ խրված մարդկանց:

Ժողովրդի բարոյական գեղեցկության, հոգու ազնվության, դուրավոր անխաթար դիմագծի պահպանման, փոխադարձ սիրո զգացումների կրողը հասարակ ընտանիքի դուստր Շուշանիկն է, որը կարդանում է իր վճռությամբ մերդաստիարակել Միքայելին: Դա Շիրվանզադեի դեմոկրատիզմի, աշխատավոր ժողովրդի հանդեպ ունեցած սիրո և հավատի արտահայտությունն է:

Շիրվանզադե-արվեստագետի գաղափարական միտումների, ստեղծագործական մեթոդների ինքնատիպ դրսևորումների ուշագրավ երևույթներ հանդիսացան «Քառս» վեպից հետո գրած «Վարդան Ահրումյան» և «Արտիստը» երկերը: Վարդան Ահրումյանի և Լևոնի կերպարների գրողի վարպետության նոր ապացույցներն են: Տարբեր ձգտումներ, տարբեր հոգեբանություն ունեցող այդ երիտասարդներից Վարդան Ահրումյանը կապիտալի կուտակման ջատագովն է, իսկ Լևոնը՝ սիրո մեջ գեղեցիկ երազներ կրողը, որ կործանվում է կյանքի արշալույսին: «Արտիստը» ստեղծագործությունը համաշխարհային արձակի լավագույն էջերից է:

Ալ. Շիրվանզադեի տաղանդը 20-րդ դարի սկզբին փայլատակեց դրամատուրգիայի բնագավառում: Նրա դրամատիզմով հարուստ վիպագրությունը պարարտ այն հողն էր, որի վրա կերտվեց մեծ գրողի թատերագրության հզոր շենքը: Նրա դրամաները մեծապես նպաստեցին 20-րդ դարի հայ թատերական արվեստի զարգացմանը, դերասանական նորանոր խմբերի և աստղերի բացահայտմանը: Ստեղծելով սոցիալական, կենցաղային, քաղաքական, հոգեբանական տեսակի պիեսներ, Շիրվանզադեն արվեստավորեց ու հարստացրեց նաև գրական հայերենը: Նկատի առնելով մեծ գրողի ծառայությունները, Վ. Տերյանը նրա գրական գործունեության 30-ամյակի առթիվ հեռագրել է անձամբ Շիրվանզադեին: Այն տպագրվել է «Հորիզոն», «Մշակ», «Սուրհանդակ» թերթերում: Հեռագրում մասամբ ընդգծված է. «Հայրենի գրականության խավար աղջամուղջը ստեղծագործական մտքի վառ ճառագայթով լուսավորող պանծալի գեղագետին խորին երկրպագություն:

Արվեստին ծառայելու դժվար ու երկար ուղին ծանր աշխատանքով ու բոցավառ սիրով հաղթահարած պանծալի հոբելյարին փառք ու պատիվ և երկար տարիների կյանք» /Վ. Տերյան, երկերի ժողովածու 4 հատորով, 1979, հ.2, էջ 22/:

Հայ դրամատուրգիան երբեք այնպիսի զարգացում չի ունեցել, ինչպես 20-րդ դարի սկզբին՝ Ալ.Շիրվանզադեի շնորհիվ: 1901-1905 թվականներին նա գրեց «Եվգինե», «Ուներ իրավունք» և «Պատվի համար» դրամաները: Վերջինս գնահատվեց որպես հայ քննադատական ռեալիզմի գլուխ-գործոցներից մեկը: 1907-1917 թթ. Մեծ գրողը գտնվում էր Փարիզում: Այստեղ նա արարում է «Ավերակների վրա», «Արմենուհի», «Կործանված» դրամաները և «Շաքլատան» կատակերգությունը: Միաժամանակ նա դրամայի է վերածում «Նաամուսը» և «Չար ոգին»:

Շիրվանզադեն արտասահմանում հետևում էր Հայաստանում տեղի ունեցող ցնցումներին: Նա ծանր ապրումներ ունեցավ 1915թ-ի Մեծ եղեռնի հետևանքով: Հայտնի է նրա նամակը ռուս ականավոր գրող Մ. Գորկուն, որտեղ խնդրում է, որ նա ուշի ուշով հետևի հայ ժողովրդի ճակատագրին և պաշտպանի նրա իրավունքները: 1926թ-ին վերադառնալով Հայաստան, նա ստեղծում է «Մորգանի խնամին» կատակերգությունը:

Մանոթ լինելով համաշխարհային դրամատուրգիայի բովանդակությանն ու ժանրային բազմազանությանը, Ա. Շիրվանզադեն մեզանում օգտագործեց սոցիալական, քաղաքական գրամայի և կատակերգության տեսակները, արծարծելով մեր ժողովրդին հուզող կարևոր ոչնամախնդիրներ:

Ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության մեջ քննարկման առարկա էր դարձել կնոջ էմանսիպացիայի (ազատության) հարցը: Արևմտահայ հատվածում արդեն հայտնի էին Զ. Եսայանի վեպերն ու Գ. Զոհրապի նովելները թեմայի շուրջ: Արևելահայ հատվածում այդ թեման լրջորեն քննարկվեց Ա. Շիրվանզադեի դրամատիկական երկերում: Իր ստեղծած կանացի կերպարներով՝ Եվգինե («Եվգինե»), Հերսիլե («Ոներ իրավունք»), Արմենուհի («Արմենուհի»), տարանդափոր գրողը խարազանեց բուժուական իրականությունը, որտեղ կինը գտնվում էր եռակի-բարոյական ստրկության մեջ: Մեծ գրողը ոչ միայն պաշտպանում էր կնոջ մարդկային իրավունքները, այլև ուզիներ էր առաջարկում տղամարդկանց հետ կնոջ իրավահավասարության համար: Իր դրամաների շուրջ ընթացող քանավեճերին մասնակցել է նաև Շիրվանզադեն: Հոդվածներից մեկում նա գրել է. «Կնոջ, ինչպես նաև տղամարդու, բուն երջանկության հիմնաքարը թաքնված է նրա հոգու խորքում, այնտեղ ուր չի կարող մուտք գործել ոչ ամուսնու սերը, ոչ նույնիսկ մայրական պարտավորությունների գիտակցությունը և ոչ մանավանդ հասարակական կարծիքի դատաստանը: Եթե կա կնոջ հոգու խորքում սնիկական, անհատական գիտակցությունը՝ տոգորված անձնական ինքնուրույնության զգացումով, նա երջանիկ է: Եթե չկա այդ՝ նրա կյանքը հիմնված է կեղծիքի, խաբեության ու ստի վրա»:

Շիրվանզադեն 1904թ. գրեց «Պատվի համար» դրաման: Այն առաջինը բեմադրվեց Բաքվում, նույն թվականի դեկտեմբերի 10-ին: Այդ պիեսով հռչակավոր գրողը նոր հորիզոնի վրա դրեց քննադատական ռեալիզմն ու դեմոկրատական հայացքները:

«Պատվի համար» դրաման բեմադրվում է ժամանակի բոլոր հայկական թատրոններում: Դեռ ավելին: Հայոց դրամատիկական խումբը տարբեր հայաշատ բնակավայրերում ներկայացնում է այն՝ արժանանալով հանդիսատեսի ջերմ ընդունելության: Ուշագրավ երևույթ էր 1908թ. Բաքվի Աբելյան-Արմենյան դրամատիկական խմբի այցելությունը Կ. Պոլիս, որտեղ վարիեթի թատրոնում ներկայացնում է «Պատվի համարը»: Այդ առիթով «Ժամանակ» թերթում հանդես է եկել մեծանուն Գ. Զոհրապը: «Պատվի համար» խորագրի տակ, բավականին ծավալուն գրախոսականում նա մեծարում է նախ Շիրվանզադեին և դրվատանքի իր խոսքն ասում ներկայացման քարձր որակի մասին: Գ. Զոհրապը գրում է. «Շիրվանզադե Պատվի համարին մեջ ժամանակակից արտիստագիրն բոլոր թիփերը լիաբուռն սփռած է: Փիենին կագմվածը իր պայազությանը մեջ հայակաչ է և հյուսիսի գրականության հորինվածը կեղշեցնե: Ռուսահայ թատերագիրը շատ բարձր է Օքթավ Միրպյոնն, որ սակայն Ֆրանսայի փասքերեն մեկն է:

Եթե դասական տեսակետն դատվեր, Շիրվանզադեի գործը այն տեղն ալ իր մեծ նշանակությունը պիտի ունենար:

...Պաքուի տրամաթիք խումբը, որ ներկայացուց Շիրվանզադեի փիեսը, հայտնություն եղավ ամենուս համար, ապշեցուցիչ հայտնություն մը» (Գ.. Զոհրապ, Երկեր, Ե., 1989, էջ 448):

Առանց Շիրվանզադեի դրամաների, չափազանց աղքատ կլիներին հայկական թատրոնների խաղացանկերը: Բավական է նշել, որ միայն Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրվել են նրա «Նամուս», «Զար ոգի», «Պատվի համար», «Քառս», «Եվգինե», «Արմենուհի», «Մորգանի խնամին» պիեսները:

Շիրվանզադեի գրական ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում նրա գրախոսությունները, դիմանկարային ընդհանրացումներն ու բանաստեղծային երևույթները: Գրական երկերի արարմանը զուգընթաց նա ակտիվորեն մասնակցում էր գրական քննադատության

զարգացմանը: Հայտնի են նրա խարազանող ելույթները անկումային գրականության խրամատ տենդությունների դեմ:

Արտասահմանից վերադառնալուց հետո Ալ. Շիրվանզադեն ամբողջ ուժով լծվեց նորոգող գրականության և արվեստի ստեղծման անհրաժեշտ գործին, հանդես եկավ խորհրդատու հոդվածներով, ճառերով, գրեց «Մորգանի խնամին» քաղաքական կատակերգությունը, որ այսօրվա համար ևս դաս կարող է լինել: Անվանի գեղագետը սերունդներին հանձնեց իր անգնահատելի մեծ ճանապարհի փորձն ու խորհուրդը՝հանձին «Կյանքի բովից» հուշագրական կոթողի: Այդ գրքում հառնում են հայոց մեծերը՝ Պ. Ադամյանը, Ռաֆֆին, Պ.Պռոշյանը, Ռ.Պատկանյանը, Ղ.Աղայանը, Գ.Արծրունին, Սիամանթոն և ուրիշներ՝ իրենց լուսատատ հոգու խառնի հուզաշխարհով:

«Կյանքի բովիցը» մի դասագիրք է, որ ընթերցողին ուսուցանում է ժողովրդասիրության, նպատակասլացության, կամքի ուժ, հոգևոր լույսի արարում:

Ալ. Շիրվանզադեի սիրտը դադարեց բաբախելուց 1935թ. օգոստոսի 7-ին, Կիսլովոդսկում: Սակայն նրա ֆիզիկական մահը նրա հավերժական ծննդի արշալույսն էր: Անմահ գրողի գրական հարուստ ժառանգությունը ծիածանի հմայիչ գույներով փայլելու է հայ դարավոր մշակույթի գանձարանում՝ նոր սերունդներին ներկայանալով ճանաչողական, դաստիարակչական, գեղագիտական արժեքներով և գործնական իր բազմաբնույթ նշանակությամբ:

Резюме

В статье рассмотрены и оценены романы и драматические произведения бессмертного писателя – Александра Ширванзаде. Отмечены место и роль его произведений в процессе развития и обогащения армянской литературы и театрального искусства.

Գրականություն

1. Ալ.Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, Հայպետհրատ, 1950-1955:
2. Ս.Տերտերյան, «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարանը», Ե., 1959:
3. Հ.Թամրազյան, «Շիրվանզադեի գրամատոլոգիան», 1954, «Շիրվանզադեի կյանքը և գործունեությունը», Ե., 1978:
4. Հայ նոր գրականության պատմությունը, հ. 4, Ե., 1972:
5. Հ.Թումանյան, Երկեր 4 հատորով, հ., 4, Ե., 1969:
6. Վ.Տերյան, Երկերի ժողովածու 4 հատորով, Ե., հ. 2, 1979:
7. Գ.Զոհրապ, Երկեր, Ե., 1989:

ԱրՊՀ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն